ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«11» օգոստոսի 2022 թվականի N 04-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ և 4-ՐԴ ԵՌԱՄՅԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերով.

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների կատարողականի գնահատումները:
2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններին:
3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին մինչև սույն թվականի հոկտեմբերի 30-ը ներկայացնել պարզաբանումներ հաշվետվությունում առկա տեղեկատվության վերաբերյալ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ՍԻՄԻԴՅԱՆ**